ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 3 դեկտեմբերի 2015 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի

Անդամակցությամբ՝ Ա. Խաչատրյանի

Ա. Թունյանի

Քննության առնելով Եղիա Ներսեսյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Եղիա Ներսեսյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 13.11.2015թ.)՝ խնդրելով.

«Որոշել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասը՝ Օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի հետ համակարգային կապի մեջ, ՀՀ Սահմանադրության 1-ին, 18-րդ, 19-րդ, 14.1-րդ և 43-րդ հոդվածներին համապատասխանության հարցը»:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ.

1. Դիմողը գտնում է, որ վարչական դատավարությունում պատասխանողի կողմից հակընդդեմ հայց ներկայացնելու իրավունքի իրականացման համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ խնդրո առարկա դրույթներով նախատեսված իրավակարգավորումը

չի համապատասխանում իրավական որոշակիության և կանխատեսելիության պահանջ-ներին՝ անհամաչափ սահմանափակելով անձի դատական պաշտպանության, արդար դատա-քննության իրավունքները, օբյեկտիվ հանգամանքներով չպայմանավորված՝ տարբերակում է դնում հայցվորի և պատասխանողի միջև՝ խախտելով դատավարության կողմերի իրավահա-վասարության սկզբունքը:

2. Դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է.

ա) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասը դիմողի նկատմամբ չի կիրառվել:

Այսպես, իր իրավական փաստարկները ներկայացնելիս դիմողը նշում է, որ իր կողմից վիճարկվող վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածը համակարգային փոխկապակցվածության մեջ է գտնվում նույն օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի հետ՝ վիճարկելով վերջինիս սահմանադրականությունը ևս: Հարկ է նշել, որ օրենսդիրը, սահմանելով սահմանադրական դատարանի կողմից որոշման կայացումը միայն դիմումի առարկայի վերաբերյալ կանոնը՝ որպես սահմանադրական դատարանի որոշմանը ներկա-յացվող պահանջ, միևնույն ժամանակ, որպես ընդհանուր կանոնից բացառություն, ամրագրում է, որ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում նշված որևէ նորմատիվ ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը պարզում է նաև այդ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների սահմանադրականությունը: Հավաստիանալով վիճարկվող դրույթների հետ փոխկապակցված տվյալ նորմատիվ ակտի այլ դրույթների՝ Սահմանադրությանը հակա-սելուն՝ սահմանադրական դատարանը կարող է Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչել նաև այդ դրույթները: Այսինքն՝ տվյալ պարագայում օրենսդիրը սահմանադրական դատարանին է վերապահել վիճարկվող դրույթների հետ տվյալ ակտի այլ դրույթների համակարգային առումով փոխկապակցվածությունը որոշելու իրավասությունը:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով **իր նկատմամբ կիրառված** օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածն օրենքին է վերապահել սահմանադրական դատարան դիմելու կարգի սահմանումը: Այդ հոդվածի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները: Դիմում կարող է ներկայացնել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը,

- որը հանդիսացել է ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարան-ներում դատավարության մասնակից,
- **որի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից կիրառվել է օրենքի դրույթ**,
- որի նկատմամբ վիճարկվող դրույթը կիրառվել է գործը լուծող վերջնական դատական ակտով,
- որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար **իրավասու սուբյեկտ չէ**: Հետևաբար, նշյալ դրույթի մասով առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հիմք.

բ) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասի սահմա-նադրականության վիճարկման վերաբերյալ պետք է նշել, որ անհատական դիմումներին ներկայացվող օրենսդրական պահանջներից մեկն այն է, որ դիմողը պետք է հիմնավորի իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի և ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի նոյեմբերի 24-ի ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման՝ անհատական դիմումն ակնհայտ անհիմն համա-րելու հիմք է: Խնդրո առարկա գործի շրջանակներում դիմողի ներկայացրած փաստարկներն առ այն, որ վարչական դատավարությունում պատասխանողի կողմից հակընդդեմ հայց ներկայացնելու իրավունքի իրականացման համար ՀՀ վարչական դատավարության

օրենսգրքի՝ խնդրո առարկա դրույթներով նախատեսված իրավակարգավորումը չի համապատասխանում իրավական որոշակիության և կանխատեսելիության պահանջներին, ակնհայտ անհիմն են, քանի որ դիմողն ունեցել է հնարավորություն հակընդդեմ հայց ներկայացնելու համար, իրացրել է այն, այդ թվում՝ նաև վերադասության կարգով բողոքարկելու միջոցով, միևնույն ժամանակ, ունեցել է հնարավորություն միջնորդություն ներկայացնել հակընդդեմ հայց ներկայացնելու համար նախատեսված ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու վերաբերյալ, ինչից, սակայն, չի օգտվել: Հետևաբար, այս համատեքստում դիմողի կողմից ներկայացված փաստարկներն ակնհայտ անհիմն են և սահմանադրա-իրավական վեճ չեն առաջացնում: Այսպիսով, առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված հիմք.

գ) դիմումի և դրան կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիմողի համար առաջացած անբարենպաստ հետևանքները նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են:

Փաստորեն, դիմողը վերոհիշյալ դրույթների սահմանադրականության հարցի վիճարկման պահանջի քողի ներքո իրականում բարձրացնում է դրանց **կիրառման իրավաչափության հարց:** Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշմամբ սահմանված իրավական դիրքորոշման՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, … ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով: Հետևաբար, այս առումով առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 6-րդ կետերով, 69-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Եղիա Ներսեսյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

3 դեկտեմբերի 2015 թվականի
ՍԴԴԿՈ/1-27